

- պասն. եւ իջաք Եպիսկոպոսարանն : Եւ կայր
- 5 չորս եկեղեցի հուպ միմիանց մերձ Դարպա-  
սին՝ մէկ բակ, մէկ մարունի, մէկ հոռմի,  
երկու հայի՝ Սուրբ Աստուածածին եւ Սուրբ  
Քառասունք. եւ յայսմ ամի<sup>2</sup> նոր նորոգած էր եւ  
մեծցուցած՝ լայն եւ ընդարձակ, զմպէթա-
- 10 չէն եւ սայլակապ, յոյժ գեղեցիկ եւ վայելուչ.  
եւ շինօղն էր խոճայ Սանօս՝ եղբայր խոճայ  
Պէտրիկին : Զի էր Պէտրիկն մեծ ոմն եւ երեւելի.  
զի որպէս վաչայ մի չրջէր, երեսուն, քառասուն  
եասախչով. ունէր ենկիչերիք, սրահիք.
- 15 եւ ասին թէ քսան եւ չորս զալամ ամալ ունի.  
կօմբուկն, մուխթասիպութիւնն, սուպաչու-  
թիւնն, խաներն, համամնին եւ այլն ամենայն  
նորա ձեռքն էր :

- Եւ այս քաղաքս մեծ պէնտէր է եւ
- 20 շահրիստան. եւ յինքն կայ Հնու-Հնդուստա-  
նու մարդ, ամէն տեղաց վաճառական. եւ  
ինչ կուժաչ կամիս, անդ գտանես : Նստի  
անդ չորս պալիօս : Եւ մեր սուրբ Աստուա-

8 այսմ : — 14 եասախչով : — 23 սասուածածնա :

<sup>2</sup> Սիմէոն Հալէպ հասու 1617 Մայիս 15ին մօտա-  
ւորապէս : Ուստի «յայսմ ամի» ըսելով կ'իմանայ 1616  
Մայիս—1617 Մայիս : Եկեղեցւոյ նորոգութեան մասին  
վարդան Լեհացի 1624ին կը գրէ Աւետարանի մը յի-  
շատակարանին մէջ. «Հաւատարիմ եւ երկիւղած իշ-  
խանն պարոն Խոճայ Սանոս չալապին... ցանկացաւ եւ  
էառ զսա եւ ետ յիշատակ անկրելի ի սուրբ Քառասունք  
յեկեղեցիս ի քաղաքս Հալապ. զի իւր ձեռն-  
տըւութեամբն եւ իւր անդրանիկ հարազատ եղբօրն  
պարոն պանծալի Խոճա Պետրոսին օղնակնութեամբն  
շինեալ եւ նորոգեալ եղեւ սուրբ Քառասունքն ի թվին  
Հայոց ՌԿԵ» (1616). տե՛ս Հանդ. Ամս., 1933, էջ  
321—322 :